ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2025 թվականի №___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №517-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №517-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) ԷՄԱ կանոնների 2-րդ կետի 22-րդ ենթակետում «Օրենքին» բառը փոխարինել «Էներգետիկայի մասին» օրենքին (այսուհետ՝ Օրենք)» բառերով,

2) ԷՄԱ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 65.1-ին, 65.2-րդ, 65.3-րդ և 65.4-րդ կետերով.

«65.1. Այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրենց 6 (10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն կՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին ունեցել են 12 միլիոն կՎտժ-ից ավելի սպառում, պարտավոր են մինչև

տվյալ տարվա փետրվարի 1-ը Օրենքի և շուկայի կանոնների համաձայն տվյալ հաշվառման կետերի մասով ստանալ որակավորված սպառողի կարգավիճակ:

65.2. Բաշխողը յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 15-ը Շուկայի օպերատորին է ներկայացնում ԷՄԱ կանոնների 65.1-ին կետի պահանջներին բավարարող սպառողների ցանկը:

65.3. Շուկայի օպերատորը ԷՄԱ կանոնների 65.2-րդ կետով նախատեսված ցանկը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում ԷՄԱ կանոնների 65.1-ին կետով նախատեսված պարտավորության, ինչպես նաև ԷՄԱ կանոնների 82-րդ կետով նախատեսված կարգավորման մասին ծանուցում է սպառողին, սպառողի Մատակարարին և Երաշխավորված մատակարարին:

65.4. Սույն կանոնների 65.1-ին կետի պահանջներին բավարարող սպառողների կողմից մինչև օրացուցային տարվա փետրվարի 1-ը որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու դեպքում Շուկայի օպերատորն իր նախաձեռնությամբ նշված սպառողներին այդ ամսաթվից տեղափոխում է Երաշխավորված մատակարարի խումբ, որպիսի դեպքում վերջինիս նկատմամբ կիրառելի է ԷՄԱ կանոնների 82-րդ կետով նախատեսված կարգավորումը:»,

3) ԷՄԱ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 111-րդ կետով.

«111. Այն սպառողները, որոնք 2024 թվականի ընթացքում իրենց 6 (10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն կՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին ունեցել են 12 միլիոն կՎտժ և ավելի սպառում, պարտավոր են մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը ստանալ որակավորված սպառողի կարգավիճակ: Բաշխողը պարտավոր է սույն կետով նշված սպառողների ցանկը Շուկայի օպերատորին ներկայացնել մինչև 2025 թվականի հուլիսի 16-ը: Շուկայի օպերատորը Բաշխողի կողմից սույն կետով նախատեսված ցանկը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում ԷՄԱ կանոնների 65.1-ին կետով նախատեսված պարտավորության, ինչպես նաև ԷՄԱ կանոնների 82-րդ կետով նախատեսված կարգավորման մասին ծանուցում է սպառողին, սպառողի Մատակարարին և Երաշխավորված մատակարարին: Սույն կետի պահանջներին բավարարող սպառողների կողմից մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու դեպքում տվյալ սպառողները Շուկայի օպերատորի կողմից այդ ժամկետից տեղափոխվում են Երաշխավորված մատակարարի հաշվեկշռման խումբ, որպիսի դեպքում

վերջինիս նկատմամբ կիրառելի է ԷՄԱ կանոնների 82-րդ կետով նախատեսված կարգավորումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

___ _____ 2025թ.
ք. Երևան